ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ապրիլի 1-ին, չորեքշաբթի, *զատկական արձակուրդներից հետո, Հոգևոր Ճեմարանում վերսկսվեցին դասավանդությունները։*

Դասավանդությունները կշարունակվեն մինչև մայիսի 20-ը, իսկ տարեվերջի քննությունները կսկսվեն հունիսի 1-ին։

* *
*

Ապրիլի 4-ին, շաբաթ, *երեկոյան ժամը 7-ին, Հոգևոր Ճեմարանի հանդիսությանց սրահում, Վեհափառ Հայրապետը դասախոսեց «Բուլղարահայ գաղութը այսօր» թեմայի շուրջ, Մայր Աթոռի միաբանության և Հոգևոր Ճեմարանի ուսանողության համար։ Դասախոսությունը լսվեց հետաքրքրությամբ։*

* *
*

Ապրիլի 5-ին, Կրկնազատիկ (Նոր Կիրակէ), *Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Մկրտիչ ավագ քահանա Մկրտչյանը, քարոզեց հոգեշնորհ Տ. Արսեն վարդապետ Բերբերյանը «Զի լռեսցին պատերազմունք, դադարեսցին յարձակմունք թշնամեաց, տնկեսցի սէր և արդարութիւն ի յերկրի» բնաբանով։*

Հավարտ սուրբ պատարագի, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ, կատարվեց հանդիսավոր հոգեհանգստյան պաշտոն՝ համաշխարհային առաջին և երկրորդ պատերազմների ընթացքում նահատակվածների համար։

* *
*

Ապրիլի 7-ին, երեքշաբթի, *«Աւետումն Ս. Աստուածածնի»։ Օրվա տոնի առթիվ, Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց հոգեշնորհ Տ. Նարեկ վարդապետ Շաքարյանը։*

* *
*

Ապրիլի 12-ին, կիրակի (Աշխարհամատրան, Կանաչ Կիրակէ), *Մայր Տաճարում պատարագեց գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը և սուրբ պատարագի ընթացքում կուսակրոն քահանա ձեռնադրեց Հոգևոր Ճեմարանի 1962 թվականի շրջանավարտ բարեշնորհ Կարապետ սարկավագ Սերայդարյանին, որը վերանվանվեց Տ. Գևորգ աբեղա։*

Խարտավիլակության պաշտոնը կատարեց հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Պալյանը։

Շաբաթ երեկոյան կատարվել էր ընծայության քահանայական կոչման կարգը։

Ձեռնադրիչ սրբազանը օծումից հետո խոսեց բովանդակալից խրատական։

Ձեռնադրության ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Երեկոյան ժամերգությունից առաջ կատարվեց վեղարի տվչության կարգը։

Հոգեշնորհ Տ. Գևորգ աբեղա Սերայդարյանը ծնվել է 1938 թվականին Բուխարեստում, ծնողների հետ հայրենիք է ներգաղթել 1948 թվականին, 1956 թվականին ընդունվել է Հոգևոր Ճեմարան, 1962 թվականին ավարտել լսարանական բաժինը և 1963 թվականին ձեռնադրվել սարկավագ։

Հոգեշնորհ Տ. Գևորգ աբեղան հավատավոր, աղնիվ, իր կոչման նվիրված երիտասարդ հոգևորական է։

Նորընծան այժմ վարում է Մայր Տաճարի դասապետի և Մայր Աթոռի գանձապահի պաշտոնները։

* *
*

Ապրիլի 18-ին, շաբաթ, *Վեհափառ Հայրապետը Երևանում ենթարկվեց վիրաբուժական թեթև գործողության, որն անցավ շատ բարեհաջող կերպով։*

Նորին Ս. Օծությունը, կատարելապես ապաքինված, հիվանդանոցից Մայր Աթոռ վերադարձավ ապրիլի 30-ին։

* *
*

Ապրիլի 19-ին, կիրակի (Կարմիր Կիրակէ), Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Մուշեղ վարդապետ Պետիկյանը։

* *
*

Ապրիլի 26-ին, կիրակի, «Տօն երևման Սրբոյ Խաչի»։ Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Պալյանը և քարոզեց «Այսօր նշան սուրբ խաչին ի յերկնից երևեալ, եկայք նոր ժողովուրդք միաբանութեամբ զՏէր օրհնեցէք» բնաբանով։

Հավարտ սուրբ պատարագի, կատարվեց հոգեհանգստյան հատուկ պաշտոն 1915 թվականի ապրիլյան մեծ եղեռնի նահատակների խնկելի հիշատակին։

* *
*

Ապրիլի 27-ին, երկուշաբթի, Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ, Հնդկաստան մեկնեց Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ և Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը։

Սրբազանը, հանուն Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի, մայիսի 20-ին Քոտայամում ներկա կլինի Հնդիկ Մալաբար Եկեղեցու նորընտիր Կաթողիկոս Նորին Սրբություն Տիմոթեոսի գահակալության հանդեսին։

Այնուհետև գերաշնորհ սրբազան հայրը կայցելի Հնդկաստանի և Ավստրալիայի հայկական գաղութներին, տանելով նրանց Վեհափառ Հայրապետի ողջույններն ու օրհնությունները։